

5.3. 2013 թվականի հոկտեմբեր ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, հոկտեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը եղել է նորմային մոտ մի փոքր դրական և բացասական շեղումներով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երրորդ տասնօրյակներում եղել է նորմայից ցածր 0.5-3 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ նորմային մոտ մի փոքր դրական և բացասական շեղումներով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում կազմել է +19 +21°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +17 +19°C, Արագածոտնի նախալեռներում՝ +14 +19°C, ՀՀ Լոռու մարզում՝ +14 +17°C, Սյունիքի նախալեռներում՝ +13 +15°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +10 +15°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հոկտեմբերի 3-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +32 +34°C, Արարատյան դաշտավայրում՝ +28 +31°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +24 +29°C, ՀՀ Լոռու մարզում և Արագածոտնի նախալեռներում՝ +20 +25°C, Սյունիքի նախալեռներում՝ +24 +27°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +18 +23°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է -3 +2°C, ՀՀ Լոռու մարզում՝ -1 +4°C, Սյունիքի նախալեռներում՝ 0 +4°C, ՀՀ Տավուշի մարզում և Արագածոտնի նախալեռներում՝ +2 +7°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +4 +9°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հոկտեմբերի 28-ին: ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում գրանցվել է -4 -9°C, ՀՀ Լոռու մարզում՝ -4 +1°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -1 +5°C, Սյունիքի նախալեռներում՝ -3 +1°C, Արագածոտնի նախալեռներում, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ 0 +5°C:

Ամսական տեղումների քանակն ամենուրեք եղել է նորմայից ցածր: Արարատյան դաշտավայրում այն կազմել է նորմայի 22-57%-ը, ՀՀ Լոռու մարզում՝ 28-83%, ՀՀ Շիրակի մարզում՝ 28-57%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 20-57%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 11-84%, ՀՀ Տավուշի մարզում՝ 22-42%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 30-92%, ՀՀ Կոտայքի մարզում՝ 24-57%:

Հոկտեմբերի 1-2-ին, 9-18-ին, 21-23-ին, 26-ին և 28-31-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Հոկտեմբերի 3-ին, 5-ին, 8-ին, 20-ին, 25-ին և 27-ին առանձին վայրերում, 4-ին, 6-7-ին և 19-ին տարածաշրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:

Հոկտեմբերի 4-ին, 6-7-ին, 15-ին, 23-24-ին և 26-ին առանձին վայրերում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ: Հոկտեմբերի 2-ին, 4-ին, 7-ին, 19-20-ին և 23-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 7-15 մ/վրկ, պռոթկումները՝ 16-20 մ/վրկ:

Հանրապետության գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 70-110%-ը, առանձին գետերում (Գավառագետ, Վեդի, Արփա, Սալիզետ, Ծղուկ և Գորիսգոտ)՝ 120-170%, իսկ որոշ գետերում (Ախուրյան, Սևջուր, Մարմարիկ, Մեղրիզետ, Ողջի և Որոտան)՝ 20-60%:

Սևանա լճի մակարդակը հոկտեմբեր ամսվա ընթացքում իջել է 8 սմ-ով և հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 1 900.22 մ, որը 2012թ. նույն օրվա համեմատ բարձր է 4 սմ-ով: